

որպիսի բանագնացությունք վասն իրացս եղեն, ոչ է տակաւին քաջ ծանուցեալ, այլ վկայ աներկբայ ստուգութեան են թուղթք Գրիգորի Է մեծի Քահանայապետի, մին առ Ենրիկոս Դ կայսր յամի 1074, յորում յիշէ զինդիր միաբանութեան Հայոց. միւս՝ առ նա ինքն կաթողիկոսն⁶² Վկայասէր՝ յամի 1080. նուիրակութիւնն 'ի սմանէ Յովհաննոս քահանայի, եւ ինքեան իսկ կաթողիկոսին Վկայասիրին երթալն 'ի Հռովմ: Յետ այսորիկ առ փոքր Վկայասիրաւն եւ Գ Եւգենիոս Քահանայապետիւ, մերձ 'ի կէս ԺԲ դարու, եղեն նուիրակութիւնք յերկոցուն աթոռոցն, հարցուածք եւ հաւանութիւնք, որպէս յիշեն ժամանակակիցք արեւմտեայք⁶³. բայց պատճենք գրութեանցն ոչ հասին առ մեզ: Առաջին յայսպիսեաց՝ մնայ մեզ յաւուրց մերոցս Լեւոնի, սակաւ ամօք յառաջ քան զպայազատելն (1184), թուղթ մի Լուսիոսի Գ Հայրապետի առ Գրիգոր Դ. (Տղայ) կաթողիկոս, գրեալ 'ի Վերոնայ քաղաքէ, հանդերձ ընծայիւք, որպէս ծանուցանէ եւ թարգմանէ զայն մեծ երախտաւորն մեր Ներսէս Լամբրունեցի. «Ի թուին Հայոց ՈԼԴ (1185) եկն Գրիգոր եպիսկոպոս (Փիլիպպուպօլսոյ) 'ի Հայրապետէն Հռովմայ Լուսիոյ՝ առ կաթողիկոս մեր Գրիգորիոս, որ էր 'ի սմանէ առաքեալ, եւ եբեր զՊատասխանի նամակի Տեառնս մերոյ, եւ զԳիրս կարգաց եկեղեցւոյ՝ հռովմայեցի գրով. եւ եզիտ զՏէր մեր 'ի քաղաքն Տարսոն, յամսեանն հոկտեմբերի: Եւ ընկալեալ կաթողիկոսին սրբոյ զՊաշխունն եւ զԽոյրն 'ի լրումն պատուոյ իւրոյ⁶⁴՝ զոհացաւ զԱստուծոյ: Եւ ետ զնամակ Քահանայապետին եւ զԳիրս կարգաց եկեղեցւոյ՝ յիմ նուաստութիւնս, թարգմանել. զոր յեղաշրջեցի 'ի հայ բարբառ, միայն

⁶² Թէպէտ եւ թուղթ Պապին վերագրեալ է առ արքեպիսկոպոս Սիւննադայ, այլ բանքն ցուցանեն առ վեհագոյն ում գրեալ. եւ թերեւս տեղին ոչ Սիւննադա էր՝ այլ Ծամնդա, ուր նստէր երբեմն մեծ Վկայասէրն Գրիգորիոս:

⁶³ Ոթոն Ֆրիզինկէնի արքեպիսկոպոս ժամանակակից († 1158), պատմէ զիրացս 'ի ժամանակագրութեան իւրում. զոր յիշեալ է մեր այլուր. (Շնորհալի եւ պարագայ իւր, յէջ 171-4, եւ յետոյ):

⁶⁴ Վարդան Պատմիչ եւս յիշելով զայսոսիկ՝ գրէ զընծայս Պապին, զնորա «Վակասն եւ զՊասկն եւ զԿօշիկն. զի զայն զգեցեալ պատարագեցէ, Մատանեաւ հանդերձ»: Այլ յոյժ անյաջ յարէ 'ի նոյնս, եթէ «Գրեաց զիր հրամանաւ սուրբ Առաքելոցն՝ 'ի նոցա երեսաց, եթէ Հայոց պատրիարքն՝ յայնկոյս ծովու իշխանութիւն կայցի 'ի վերայ Հայոց եւ Յունաց եւ ամենայն ազգաց, որպէս մեք յայսմ կողմանէ, երկնաւոր եւ երկրաւոր բանալեօք»: Պատրեալ անշուշտ բարեմիտ պատմչին 'ի բանից Դաշանց թղթոյ, որ թուի զայսու ժամանակաւ յօդեալ յոյժ անյարմարապէս. զորս նշաւակէ պատճէն թղթոյ Քահանայապետին Կլեմայ, թարգմանեալն 'ի Լամբրունեցւոյն, որ տեսցի յառաջիկայոյ: